

Ռադիո ՅԵՎԱՆ

Ունկնդրեցե՛ք ՌԱՏԻՕ ՍԵՒՄՆ-ը

Լիբանանի բոլոր շրջաններում մեջ, հետեւեալ ալիքներում վրայ

- * Լիբանանի եւ Սուրիոյ ծովեզերեայ շրջաններում, Լեռնալիբանանի, Պեքալի, Սայտալի եւ Թրիփոլի մեջ՝ 101.5 FM ալիքին վրայ:
- * Հիւսիսային Լիբանանի մնացեալ շրջաններում մեջ 101.3 FM ալիքին վրայ:
- * Պելոսի եւ Լեռնալիբանանի մեջ 90.8 FM ալիքին վրայ:

Հեռ.՝ 01-567161-2-3 Fax: 01-567168

* Cablevision 11700 GHz digital. * Կայքէջ: www.radiosevan.com

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ 6-ՐԳ ՆԻՍԱԸ ՔՆՆԱՐԿԵՅ ԸՆՏՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԹՂԹԱԾՐԱՐԸ

ՅԱԶՈՐԴԸ՝ ՅՈՒՆԻՍ 1-ԻՆ

Երեկ կեսօրին, Պառլամենտի պալատին մէջ, հանրապետութեան նախագահ Միշէլ Սըլէյմանի հովանաւորութեամբ, Լիբանանի քաղաքական բեմին վրայ գործող քաղաքական հոսանքներու մասնակցութեամբ կատարուեցաւ ազգային երկխօսութեան վեցերորդ նիստին բացումը: Նիստի բացումը կատարուեց ընթացքին, հանրապետութեան նախագահը շեշտեց երկրին ապահովութիւնը կայուն պահելու, ինչպէս նաեւ խորհրդարանի ընտրութիւնները ապահովական միջադէպերէն խնայելու անհրաժեշտութիւնը: Նշենք, թէ երկխօսութեան նիստը աւարտելէ անմիջապէս ետք, հանրապետութեան նախագահը պաշտօնական հրահրով մը մեկնեցաւ Մեծն Բրիտանիա:



Ազգային երկխօսութեան մասնակիցները շեշտեցին ընտրութիւնները ժողովրդավարական ու լարուածութենէ հեռու պահելու անհրաժեշտութիւնը: Ժողովականները շեշտեցին ազգային երկխօսութեան նիստերը շարունակելու անհրաժեշտութիւնը:

Նախագահ Միշէլ Սըլէյման, յետմիջօրէին փակեց ազգային

երկխօսութեան նիստը, յաջորդը՝ այսինքն՝ 7-րդ նիստին թուականը ճշդելով Յունիս 1-ը:

Պետական նախարար Ուաէլ Ապու Ֆաուր յայտնեց, թէ ազգային երկխօսութեան երկուայն նիստը խորհրդարանի ընտրութիւններու նախորդող ժամանակաշրջանին վերջինը պիտի ըլլայ: Նախարարը շեշտեց ընտրութիւններուն գործընթացը ազատ եւ թափանցիկ պայմաններու տակ ամբողջացնելու անհրաժեշտութիւնը: Ապու Ֆաուր նաեւ նշեց, թէ Ընկերակցական Յառաջդիմական կուսակցութեան նախագահ Ուալիտ Ճոմայլաք յառաջիկայ օրերուն ընթացքին այցելութիւն մը պիտի կատարէ Պեքերը:

Պետական նախարար Ժան Օդասապեան յայտնեց, թէ ազգային երկխօսութեան նիստերը պէտք է, որ յստակ օրակարգով իրականացնուին երկուայն կողմերէն: Նախարարը միաժամանակ մերժեց ու դատապարտելի գտաւ՝ Դիմադրութեան գործունեութեան պիտակի տակ, արաբական որբէ պետութեան հետ Լիբանանի փոխ-յարաբերութիւնները ալեկոծելու փորձերը:

ՊԵՐՐԻ ԿԸ ՓՈՐՁԷ ՀԱՆՊԱՐՏԵՑՆԵԼ ԵԳԻՊՏՈՍ-ՀՐԶՊԱԿԱ ՃԱԿԱՏԸ

Ընտրական մթնոլորտէն հեռու, խորհրդարանի նախագահ Նեպի Պըրրի կ'աշխատի լուծում մը գտնել Եգիպտոսի եւ Հրզպակայի միջեւ մագլցող հակամարտութեան: Պըրրի դիտել կու տայ, որ մագլցումը վնասաբեր պիտի ըլլայ Եգիպտոսի եւ Լիբանանի ընդհանրական շահերուն համար: Եգիպտոս չի հակասեր Պըրրիի կեցուածքներուն, սակայն կ'ընդգծէ, թէ թրքաժողովրդական շահերուն հետքերը կ'արդարադատութեան եւ յանցագործները պիտի ստանան իրենց պատիժը: Այլ գարգայումի մը մէջ, Եգիպտոսի «Իսլամ Երբայրներ» կազմակերպութեան հոգեւոր առաջնորդ Մահմուտ Աբէ Ֆաուր յայտարարեց, թէ Հրզպակայ՝ Եգիպտոս թափանցած էր Կազայի բնակիչներուն օգնութեան ձեռք մեկնելու նպատակով: Կ'արժէ ընդգծել, որ «Իսլամ Երբայրներ» կազմակերպութեան սինիս եւ շիի դեկլարութեան միջեւ Եգիպտական հողերու վրայ Հրզպակայի դիքին արարքին կապակցութեամբ յառաջած են շարք մը լուրջ տարակարծութիւններ: Ոմանք կ'ըսեն, թէ «Իսլամ Երբայրներ»-ու շիի անդամները կը փորձեն իրենց հակակշիռն տակ վերցնել կազմակերպութիւնը, որիչինքն դիտել կու տան, թէ հարցը ոչ մէկ կապ ունի համայնքային խորհրդակցութեան հետ, եւ Հրզպակայ՝ պարզապէս կ'աշխատէր օգնութեան ձեռք մեկնել Կազայի պաղեստինցիներուն:

ԸՆՏՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Ընտրական արդիւններու համաձայն, Մուսթաքալա Գոսանք խորհրդարանական խմբակարգումի նախագահ Սաատ Զարիրի 48 ժամանակ պայմանաժամ տուած է Լիբանանեան Ուժերուն, որպէսզի Պելոսի Առաջին ընտրաշրջանին մէջ՝ ի նպաստ մեթո Սերժ Թուրաբարգիսեանին յետո կոչեն հայ կաթողիկէ համայնքին պատկան աթոռին համար իրենց առաջադրած թեկնածուին թեկնածութիւնը: Մուսթաքալա Գոսանքի նախագահին մօտիկ արդիւններ կը հաւաստեն, թէ Պելոսի առաջին ընտրացանկին մէջ անոր նախընտրութիւնը կ'երթայ երեսփոխան Սերժ Սերժ Թուրաբարգիսեանին: Այս հարցին շուրջ Լիբանանեան Ուժերու արդիւններ կը յայտնեն, թէ՛ Ռիշար Գոյումճեանի թեկնածութիւնը յետո կոչելու հասկացողութիւն մը գոյացած է վերջին ժամերուն, որուն փոխարէն Լիբանանեան Ուժերը Չահլէի ընտրաշրջանի հայ աթոռին համար պիտի առաջադրեն իրենց հաւանութիւնը վայելող թեկնածու մը: Իսկ ինչ կը վերաբերի Պելոսի առաջին ընտրաշրջանի ընտրացանկին յայտարարութեան, ապա լրատուական արդիւններ կը յայտնեն, թէ ընտրացանկը սկզբունքով այսօր՝ Չորեքշաբթի օր պիտի յայտարարուի: Ընտրացանկը կ'ընդգրկէ հետեւեալ անունները՝ յոյն կաթողիկէ համայնքի պատկան աթոռի թեկնածու՝ Միշէլ Ֆարաոն, ուղղափառ համայնքի աթոռին թեկնածու՝ Նէյլա Թուէյնի, մարոնի համայնքին պատկան աթոռին թեկնածու՝ Նետիմ Ճեմայել, հայ առաքելական համայնքի պատկան աթոռին թեկնածու՝ Ժան Օդասապեան, հայ կաթողիկէ համայնքի պատկան աթոռին թեկնածու՝ մեթո Սերժ Թուրաբարգիսեան: Ընտրական ծիրին մէջ մնալով, Էստրալանի համախոհական ընտրացանկին յայտարարութիւնը կ'ուշանայ թեկնածուներուն անուններուն շուրջ տիրող անհամաձայնութեան պատճառով:

Երեսփոխան Մուսթաքալա Ալլուշ յայտարարեց, թէ հակառակ խորհրդարանի յառաջիկայ կազմէն իր բացակայութեան ինչ հաւատարիմ կը մնայ Մարտ 14-ի ուժերուն գաղափարներուն: Ան նշեց, թէ ընտրացանկերու կազմութեան ընթացքին, ինք յետո կոչած էր իր թեկնածութիւնը, ընտրական գործընթացը դիրացնելու նպատակով:

ՍԻՆԻՐԱ ԿԸ ԳՆԱՀԱՏԷ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ԳԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Վարչապետ Ֆուատ Սինիրա ընդունեց Ներքին Ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն գործակալ Աշրաֆ Ռիֆի եւ անոր հետ քննարկեց երկրին ապահովական իրավիճակը:

Վարչապետը դրուատեց երկրին ապահովական կայունութիւնը պահպանելու գծով Ներքին ապահովութեան ուժերուն դերակատարութիւնը:

Սինիրա ընդունեց Լիբանանի մօտ Զաթարի դեսպան Սաատ Պըն Ալի Ալ Սըիլանին, ինչպէս նաեւ երեսփոխան Սամիր Ճըսըրը:

Կեց այցելութեան թուականը: Սայտայի մէջ, «Ժամանակակից»-ի մօտիկ արդիւններ կը յայտնեն, թէ վարչապետ Ֆուատ Սինիրա շարաքաւեցեան, Սայտա կատարած այցելութեան ընթացքին իրենց առաջադրած է Սայտայի քաղաքապետարանի նախագահութիւնը: Արդիւնը նաեւ նշեց, թէ «Ժամանակակից»-ի ղեկավարութիւնը Ներկայիս կ'ուսումնասիրէ վարչապետին առաջարկը:

ՍԱՅՏԱՅԻ ՄԵՉ ԶԱՄԱԶՅՆՈՒԹԻՒՆ

Իրաքի կառավարութեան արդիւն մը յայտարարեց, թէ վարչապետ Ֆուատ Սինիրա այցելութիւն մը պիտի կատարէ Պաղատ: Արդիւնը յիշատակարար է:

ՀԻԼԸՐԻԻ ԵՒ ԳՈՆՏՈՒԼԻՉԱՅԻ ՄԻՋԵՒ...

Վերլուծելով Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Յիլըրի Գիլթըրի Պելոսի կատարած այցելութիւնը, Ընկերակցական Յառաջդիմական կուսակցութեան նախագահ Ուալիտ Ճոմայլաք ըսաւ, թէ կարելի էր համատեղութիւններ կատարել Յիլըրի Գիլթըրի եւ Գոնտոլիզա Ռայսի միջեւ, որովհետեւ շրջանային թուրքերը յեղաշրջուած են Ներկայիս: Ծոմայլաք նաեւ նշեց, թէ Իրանի եւ Սուրիոյ հետ Ուաշինգթընի փոխ յարաբերութիւնները թեւակոխած են նոր հանգրուան մը, որովհետեւ Սպիտակ Տան համար մեծազանց սպառնալիքը Ներկայիս կու գայ ԱՖղանիստանէ ու Փաքիստանէ:

ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԳՍԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱԹՕ-Ի ԶԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՏԵՂԱԿԱԼԸ

Նախագահ Սերժ Սարգսեան ընդունեց ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղարի տեղակալ, դեսպան Գլաուտիո Բիզոնի: Նախագահը իր հիւրին նշեց, թէ Եւրոպական ուղղութիւնը կը մնայ Հայաստանի արտաքին քաղաքական գերակայութիւններէն մէկը: Սարգսեան նշեց նաեւ, թէ ՆԱԹՕ-ի հետ համագործակցութիւնը կը նկատուի Հայաստանի ազգային անվտանգութեան քաղկացուցիչ մասը:

ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղարի տեղակալը ողջունեց հայ-թրքական երկխօսութիւնը եւ այդ ուղղութեամբ արձանագրած յառաջընթացը: Կողմերը նաեւ քննարկեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գարգացումները եւ ողջունեցին խաղաղ լուծման առաջնորդող բոլոր ջանքերը:

Բիզոնիեթո նաեւ այցելեց վարչապետ Տիգրան Սարգսեանին: Վարչապետը ըսաւ, թէ Հայաստան մեծ կարեւորութիւն կու տայ ՆԱԹՕ-ի հետ յարաբերութիւններու գարգացման եւ համագործակցութեան:

ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԳՍԵԱՆ ԱՅՅԵԼԷ ՀԱՅԱՍՏԱՆ

Ոչ պաշտօնական տեղեկութիւններու համաձայն, յառաջիկայ օրերուն ընթացքին, նախագահ Նիքոլայ Սարգսեան պիտի այցելէ Ատրպէյճան, Վրաստան եւ Հայաստան: Այս մասին պաշտօնական տեղեկութիւններ չըլլալով հանդերձ ռուսական եւ ատրպէյճանական աղբիւրներ հաստատեցին Սարգսեանի այցելութեան մասին լուրը:

ՊՐԱՅՁԱ ԼԱԽԱՏԵՍ

ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի ամերիկացի համանախագահ Սեթ Պայպա, իբրեւ «իրատեսական» հնարաւորութիւն գնահատեց յառաջիկայ ամիսներուն ընթացքին Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորումը:

ԺԶՄ ԶԻՂԻՍՏԱՅԻ ՂԱՍԻ ԾՅՁՅՈՒ ԺԶՄԾԶԾԾ ԻՂԻ ԶԻՂԻՍՏԱՅԻ ԼԱՍԻ

Հայ Ազգային Գոնկրէտը, Մայիս 1-ին Երեւանի պողոտաներուն վրայ պիտի կատարէ բողոքի ցոյց մը եւ հանրահաւար մը: Գոնկրէտը, միաժամանակ հրատարակեց հաղորդագրութիւն մը, որ կ'ըսուի, թէ իշխանութիւնները կը հալածեն եւ բռնութիւն կը գործեն ցոյցին համար թուցիկները բաշխողներուն դէմ:

Գոնկրէտին հաղորդագրութիւնը կ'ընդգծէ, թէ հանրահաւարը քաղաքական իրավիճակի արմատական փոփոխութեան հիմք պիտի դառնայ:

ԱԻՆԼԻ ՈՒՇ, ԶԱՆ ԵՐԲԵՔ

Ժառանգութիւն կուսակցութեան վարչութեան նախագահ Անահիտ Բախշեան ըսաւ, թէ գործող համաձայնական կառավարութեան Դաշնակցութեան դուրս գալու որոշումը ուշացած քայլ մըն էր: «Եթէ իրենց սկզբունքները այսօր կ'արտօնեն դուրս գալ համաձայնական կառավարութեան, ուրեմն այդ հիմքերը շատոնց գոյութիւն ունենին, բայց աւելի ուշ, քան երբեք», ըսաւ Բախշեան:

ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Լիբանանեան ապահովական կառույցներ, Այն Էլ Ռըմանէյի մէջ ձեռքարկուեցին թմրանիւթերու երկու մեծ մաքսանետներ: Ապահովական այլ միջոցառումի մը հետեւեանքով, ապահովական կառույցներ Նապալիէի մէջ ձեռքարկուեցին օրէնքէ փախուստ տուած 12 կասկածելիներ եւ գրաւեցին կեղծ փաստաթուղթերով շրջող 27 ինքնաշարժներ: Իսկ ընդհանրապէս վերջին 24 ժամերուն ընթացքին, Ներքին ապահովութեան ուժեր յաջողեցան ձեռքարկել օրէնքէ փախուստ տուած 66 անձնատրուիներ:

ՊԱՆ ԶԻ ՄՈՒՆ ԻՐ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՏԱՅԱՅՏԷ ԶԵՆՔԻ ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Պան Զի Մուն իր մտահոգութիւնը արտայայտեց, որ Հրզպակայ եւ այլ միլիտարիստ կազմակերպութիւնները կը խանգարեն Լիբանանի մէջ պետականութիւն կառուցելու գործընթացը, ինչպէս նաեւ ընտրութիւններուն նախօրեակին կը ստեղծեն վահի ու սարսափի մթնոլորտ մը: Զի Մուն անբնական եւ խիստ մտահոգիչ գարգացում մը նկատեց Կազայի բնակիչներուն գինեալ օժանդակութիւնը հայաթայեցի պատրուակին տակ, Եգիպտոսի սահմաններէն ներս գեւքի մաքսանետութիւն կատարելու եւ Եգիպտոսի հողերէն Իսրայէլի դէմ ճակատ բանալու Հրզպակայի արարքը: